600.0053.23.03.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

23 մարտի 2016 թվականի №53Ա
քաղ.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի №200Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի դեկտեմբերի 9-ի «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած՝ բնակչության և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների ներտնային գազասպառման համակարգերի նախագծման« շինհավաքակցման և կարգաբերման աշխատանքների կատարման ծախսերի հաշվարկման մեթոդիկային համաձայնություն տալու մասին» №200Ա՝
   1) որոշման մեջ «ՀայՌուսգազարդ» բառը փոխարինել «Գազպրոմ Արմենիա» բառերով.
   2) որոշման հավելվածի՝ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած բնակչության և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների ներտնային գազասպառման համակարգերի նախագծման շինհավաքակցման և կարգաբերման աշխատանքների կատարման ծախսերի հաշվարկման մեթոդիկայի 4-րդ կետում «0.053» թիվը փոխարինել «0.133» թվով, իսկ 5-րդ կետում «0.1» թիվը փոխարինել «0.11» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
23 մարտի 2016թ